ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մայիսի 2020 թվականի թիվ 142-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ԱՉԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՌՈՒԲԵՆ ԱԹԱԲԵԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՈՎ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մայիսի 6-ի թիվ ՍՊ/20.1/12022-2020 հանձնարարականը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մայիսի 6-ի թիվ ՍՊ/20.1/12022-2020 հանձնարարականի համաձայն՝ Աչաջուր համայնքի բնակիչ Ռուբեն Աթաբեկյանի դիմումով բարձրացված հարցերի ուսումնասիրման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Խմբի ղեկավար՝

Տիգրան Մուշեղյան - Քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար

Անդամներ՝

Գագիկ Մելիքբեկյան - Իրավաբանական բաժնի վարիչ

Աղաբեկ Գալստյան - ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄ ՏՍ գործունեության համակարգման բաժնի վարիչի պաշտոնակատար:

2.Աշխատանքային խմբին՝ 2-օրյա ժամկետում կատարել ուսումնասիրություն Աչաջուր համայնքի բնակիչ Ռուբեն Աթաբեկյանի դիմումով բարձրացված հարցերի վերաբերյալ և ներկայացնել տեղեկատվություն:

ՀԱՅԿ ՉՈԲԱՆՅԱՆ

13.05.2020

X

2020թ. մայիսի 13
ք.Իջևան